ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 387 – Ա

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԲԺԻՇԿ ՇՈՒՇԱՆ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և 163-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զ. Առաքելյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զարուհի Առաքելյանին 2026 թվականի օգոստոսի 20-ից տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:
2. Զ. Առաքելյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել բժիշկ Շուշան Թևանյանին:
3. Զարուհի Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի սեպտեմբերի 3-ից:

2026-08-14 17:46:21 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 14

Ք. Կապան